

ԲՏԱ Բանկ ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններ

*2010թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն	1
Ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն	2
Համապարփակ եկամտի մասին ամփոփ հաշվետվություն.....	3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն.....	4
Դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն.....	5

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«FSU Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերության բաժնետերերին և Խորհրդին

Կից ներկայացված են ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, 2010թ. ավարտված տարվա համար ամփոփ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, ամփոփ համապարփակ եկամտի մասին հաշվետվությունը, ամփոփ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և ամփոփ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, որոնք քաղված են 2010թ. ավարտված տարվա համար «FSU Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ Բանկ) աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից: Մենք տվել ենք ձևափոխված՝ կարծիքի վրա չազդող, գործունեության անընդհատության հետ կապված էական անորոշությունները լուսաբանող պարբերությամբ եզրակացություն 28 ապրիլի 2011թ. թողարկված այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր աուդիտորական հաշվետվությունում: Այդ ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում աուդիտորական հաշվետվության թողարկումից հետո տեղի ունեցած իրադարձությունների ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների կողմից պահանջվող Բանկի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների բոլոր բացահայտումները: Այդ իսկ պատճառով ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն փոխարինում Բանկի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար դեկլարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համապատասխան պատրաստելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ուղղությամբ աշխատանքներ» Աուդիտի միջազգային ստանդարտին (ԱՄՍ 810) համապատասխան իրականացրած ընթացակարգերի հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացության արտահայտումը:

Եզրակացություն

Մեր կարծիքով, 2010թ. ավարտված տարվա համար Բանկի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվություններին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝

Սերգեյ Տասկան

Գլխավոր տնօրեն՝ Մ Ալեքսանդրյան՝ ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի (գործող 2008թ.-ի սեպտեմբերի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)

Էրիկ Հայրապետյան

28 ապրիլի 2011թ.

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն

2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	<i>2010</i>	<i>2009</i>
Ակտիվներ		
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	1,577,394	2,223,278
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	89,377	71,060
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	4,098,136	3,910,999
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	1,201,744	1,559,065
Ռեպո համաձայնագրերով գրավադրված արժեթղթեր	575,898	99,675
Հիմնական միջոցներ	320,955	344,325
Ոչ նյութական ակտիվներ	125,800	107,798
Հետաձգված հարկային ակտիվներ	17,193	-
Այլ ակտիվներ	255,118	126,424
Ընդամենը՝ ակտիվներ	8,261,615	8,442,624
Պարտավորություններ		
Պարտավորություններ Կենտրոնական բանկի նկատմամբ	-	245,801
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,279,397	1,256,801
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	1,659,046	1,760,621
Վճարվելիք գումարներ	2,315	3,200
Այլ պարտավորություններ	106,262	58,350
Ընդամենը՝ պարտավորություններ	3,047,020	3,324,773
Կապիտալ		
Կանոնադրական կապիտալ	6,520,000	6,520,000
Պահուստներ՝		
Գլխավոր պահուստ	-	-
Վերազնահատման պահուստներ	36,081	41,211
Վնաս	(1,341,486)	(1,443,360)
Ընդամենը՝ կապիտալ	5,214,595	5,117,851
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ	8,261,615	8,442,624

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են ղեկավարության կողմից և նախնական հավանության են արժանացել Բանկի Խորհրդի կողմից

Նուր Բակրբերգենով

Գործադիր տնօրեն-վարչության նախագահ

Տաթևիկ Գալստյան

Գլխավոր հաշվապահ

28 ապրիլի 2011թ.

Ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	<i>2010</i>	<i>2009</i>
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	996,361	1,092,939
Հաճախորդներին տրված վարկեր	744,800	899,926
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	785	13,222
Ներդրումային արժեթղթեր	188,866	115,410
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	61,910	64,381
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(190,414)	(282,352)
Պարտավորություններ Կենտրոնական Բանկի նկատմամբ	(2,297)	(68,300)
Հաճախորդների հաշիվներ	(94,877)	(54,400)
Պարտավորություններ վարկային կազմակերպությունների նկատմամբ	(93,236)	(159,652)
Այլ	(4)	-
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	805,947	810,587
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	86,073	73,997
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(25,262)	(30,045)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	60,811	43,952
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերից օգուտ / (վնաս)	1,111	(31,701)
Արտարժույթային գործառնություններից օգուտ, այդ թվում՝	69,878	43,808
- արտարժույթի առքուվաճառք	74,990	4,438
- արտարժույթի վերագնահատում	(5,112)	39,370
Այլ գործառնական եկամուտներ	61,754	77,470
Գործառնական եկամուտներ	999,501	944,116
Զուտ մասհանումներ վարկերի հնարավոր կորուստների պահուստներին	(77,023)	7,648
Ընդհանուր վարչական ծախսեր	(326,098)	(429,367)
Անձնակազմի գծով ծախսեր	(427,861)	(489,374)
Այլ գործառնական ծախսեր	(25,983)	(40,218)
Մաշվածություն և ամորտիզացիա	(54,481)	(50,101)
Այլ ակտիվների արժեզրկման պահուստի ձևավորում	(2,091)	(1,237)
Վարկերի վաճառքից վնաս	-	(16,325)
Շահույթ/ (վնասը) մինչև հարկումը	85,964	(74,858)
Շահութահարկի գծով փոխհատուցում	15,910	13,106
Ժամանակաշրջանի շահույթ/ (վնասը)	101,874	(61,752)

Նուր Բակերբեկյան

Գործադիր տնօրեն-վարչության նախագահ

Տաթևիկ Գալստյան

Գլխավոր հաշվապահ

28 ապրիլի 2011թ.

Համապարփակ եկամտի մասին ամփոփ հաշվետվություն

2010 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	<i>2010</i>	<i>2009</i>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	101,874	(61,752)
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերից չիրացված օգուտներ	(2,501)	45,879
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերից իրացված շահույթ/(վնաս)՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն վերադասակարգված	(3,911)	19,654
Այլ համապարփակ եկամտի զծով շահութահարկ	1,282	(13,106)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	(5,130)	52,427
Համապարփակ ֆինանսական արդյունք	96,744	(9,325)

Նուր Բակրերգենով

Գործադիր տնօրեն-վարչության նախագահ

Տաթևիկ Գալստյան

Գլխավոր հաշվապահ

28 ապրիլի 2011թ.

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

2010 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	<i>Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի վերագնահատումից չիրացված շահույթ / (վնաս)</i>			<i>Պահուստներ և չբաշխված շահույթ / (կուտակված վնաս)</i>	<i>Ընդամենը կապիտալ</i>
<i>Կանոնադրական կապիտալ</i>					
Մնացորդը 01 հունվարի 2009թ. Դրությամբ (վերահաշվարկված)	6,520,000	(11,216)	(1,381,608)		5,127,176
Համապարփակ եկամուտ	-	52,427	(61,752)		(9,325)
Մնացորդը 31 դեկտեմբերի 2009թ. Դրությամբ (վերահաշվարկված)	6,520,000	41,211	(1,443,360)		5,117,851
Համապարփակ եկամուտ	-	(5,130)	101,874		96,744
Մնացորդը 31 դեկտեմբերի 2010թ. Դրությամբ (վերահաշվարկված)	6,520,000	36,081	(1,341,486)		5,214,595

Նուր Բակբերգենով

Գործադիր տնօրեն-վարչության նախագահ

Տաթևիկ Գալստյան

Գլխավոր հաշվապահ

26 ապրիլի 2011թ.

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն
2010 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(հազար ՀՀ դրամ)

	2010	2009
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր* մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	186,201	(17,207)
Ստացված տոկոսներ	943,353	1,090,081
Վճարված տոկոսներ	(206,424)	(440,619)
Ստացված կոմիսիոն գումարներ	86,073	73,998
Վճարված կոմիսիոն գումարներ	(25,262)	(30,046)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)	74,990	4,438
Վարկերի վաճառքից մուտքեր	-	146,927
Ստացված այլ եկամուտներ	56,767	76,945
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(395,832)	(489,374)
Գործառնական գործունեությունից վճարված այլ ծախսեր	(347,464)	(449,557)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	(745,601)	(3,364,444)
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)	(449,987)	1,345,669
- այդ թվում՝ վարկերի և փոխատվությունների նվազում/ (ավելացում)	(420,589)	1,356,327
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի ձեռքբերում	(1,836,380)	(2,756,769)
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի վաճառք և մարում	1,765,902	2,202,496
Այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)	(27,040)	128,131
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)	(215,711)	(4,132,320)
- այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)	(34,222)	641,404
Այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)	17,615	(151,651)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	(559,400)	(3,381,651)
Վճարված շահութահարկ	(6,619)	(19,206)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	(566,019)	(3,400,857)
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(43,081)	(71,955)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	-	2,635
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	(43,081)	(69,320)
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	-	-
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	-	-
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(36,784)	105,885
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(645,884)	(3,364,292)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	2,223,278	5,587,570
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	1,577,394	2,223,278

Նուր Բակբերգենով

Գործադիր տնօրեն-վարչության նախագահ

Տաթևիկ Գալստյան

Գլխավոր հաշվապահ

26 ապրիլի 2011թ.

